ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ
ÖSTERREICHISCHES MUTTER KIND ZENTRUM

**Արձանագրություն N 4**

***«ՇՄԳՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/15-1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի***

ք. Գյումրի — 17 հունվարի 2018թ., ժ 18:00

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ՝*** — *Կարեն Հմայակյան*

*Գնման պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի պատասխանատու-ԳՊ/ԳԱՊ*

***Անդամներ՝***

*Գնման պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ-ԳՊ/ԳԱ* — ***Միրուշ Պողոսյան***

***Լիլիթ Հովհաննիսյան***

*Գնման պատասխանատու/Բացման Աշխատակազմ-ԳՊ/ԲԱ* — ***Անահիտ Մելքոնյան***

***Կարեն Ասատրյան***

***Հանձնաժողովի քարտուղար՝*** — ***Նվարդ Բաղալյան***

*Գնման պատասխանատու/Մրցույթի համակարգող-ԳՊ/ՄհՄ*

1. ***Ընդունել ի գիտություն***

- Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի/Կարգ/ 47-րդ և 48-րդ կետերը, <<ՇՄԳՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/15-1>> ծածկագրով ԳՀ գնահատող հանձնաժողովի 16.01.2018թ. թիվ 3.1 որոշմամբ էլեկտրոնային փոստով <<Բիո-Քիմ>> ՍՊԸ-ին փաստաթղթերը ամբողջական չներկայացնելու և հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու հիմքով, էլեկտրոնային պաշտոնական փոստին ծանուցվել է՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել բացակայող փաստաթղթերը:
  Հանձնաժողովի ուսումնասիրությամբ <<Բիո-Քիմ>> ՍՊԸ-ի ներկայացրած ՀՀ ԱՆ մեթոդական հրահանգում և ապրանքի տեխնիկական նկարագրում/հավելված 6.1/ արձանագրվել են հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխանություններ:
  Մասնավորապես՝
- առաջարկված ախտահանիչ նյութի մեջ pH զգալիորեն տարբերվում է հրավերով սահմանված նյութի թթվայնության ցուցանիշից /ի դեպ, երկու դեպքում էլ խոսքը գնում է 20%-ոց նյութերի վերաբերյալ/
- <<Բիո-Քիմ>> ՍՊԸ-ի առաջարկած նյութում բացակայում են նաև ստուգիչ թեստ զոլեր՝ լուծույթի պիտանելիությունը վերահսկելու համար
- Կազմակերպությունը չի ներկայացրել որևէ բժշկական էնդոսկոպիկ սարքավորում արտադրողի կողմից երաշխավորություն նյութի համատեղելիության վերաբերյալ, իսկ ախտահանումը և մանրէազերծումը նախատեսված է հազարավոր եվրոներ

արժողությամբ, հատուկ խնամք պահանջող էնդոսկոպ վիրահատական գործիքների և օպտիկայի համար:

2. ***<u>Հանձնաժողովն արձանագրեց</u>***

Սահմանված ժամկետներում տեղի են ունեցել բանակցություններ, կազմակերպության կողմից տրվել են ոչ լիարժեք պարզաբանումներ:

3. ***<u>Հանձնաժողովը որոշեց</u>***

**3.1** Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի/Կարգ/ 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

*Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0*

**3.2** Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը/կցվում է/:

*Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0*

***3.1*** Ամփոփման նիստը հրավիրել պայմանագրեր կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:00-ին:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0***

Հանձնաժողովի
Նախագահ՝ Կարեն Հմայակյան

Անդամներ՝ Սիրուշ Պողոսյան
Լիլիթ Հովհաննիսյան
Անահիտ Մելքոնյան
Կարեն Ասատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նվարդ Բաղալյան